Հաշվետվություն

2018 թվականի նոյեմբերի 20-ից 24-ը Իտալիայի Հանրապետությունում (Հռոմ)՝ Աղետների ռիսկի նվազեցման եվրոպական ֆորումին մասնակցության վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Արա Նազարյան, Մարգարիտա Հակոբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ, ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության այլ պետություններում, միջազգային կազմակերպություններում, ՀՀ այլ պետական մարմիններում ՀՀ ԱԻՆ ներկայացուցիչ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Իտալիայի Հանրապետություն, քաղաք Հռոմ, 2018թ. նոյեմբերի 20-ից 24-ը

4. **Հրավիրող կողմը**

ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակի (UNISDR) եվրոպական մասնաճյուղ

5. **Գործուղման նպատակը**

Մասնակցություն Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) եվրոպական ֆորումին, որին ներկա էին պլատֆորմի անդամ 55 և ավել երկրներից շուրջ 800 պատվիրակներ, այդ թվում՝ նախարարներ, կառավարությունների անդամներ, ականավոր փորձագետներ, գիտնականներ, միջազգային, հասարակական կազմակերպությունների և այլ ներկայացուցիչներ:

6. **Քննարկված թեմաները**

Հենվելով 2017թ. Թուրքիայում տեղի ունեցած ԱՌՆ եվրոպական ֆորումի և 2017թ. Մեքսիկայում անցկացված ԱՌՆ Գլոբալ պլատֆորմի արդյունքների և Սենդայի գործողությունների ծրագրի իրականացման նպատակով 2015-2020թթ. եվրոպական ճանապարհային քարտեզի վրա՝ 2018թ. Հռոմում անցկացվող ԱՌՆ ԵՖ-ն նպատակ ուներ անդրադառնալ անկյունաքարային այն հիմնախնդիրներին, որոնք կարող են խթանել Կայուն զարգացման նպատակներին և Փարիզի Համաձայնագրին (կլիմայի փոփոխություն) համահունչ 2015-2030թթ. Սենդայի գործողությունների ծրագրի իրականացումը, այդ թվում՝

- Աղետների ռիսկի նվազեցման կայուն ֆինանսավորման գործիքներ

- ԱՌՆ ազգային ռազմավարությունների միջոցով Սենդայի գործողությունների ծրագրի, Նոր քաղաքաշինության օրակարգի, ԿԶՆ-ների, Փարիզի համաձայնագրի իրականացման ներդաշնակեցում,
- դիմակայունության կառուցման գործում հանրության լիարժեք ներգրավվում *(ոչ մեկին չթողնելով անտեսված)*
- մշակութային ժառանգության ռիսկերի նվազեցում,
- նորարարություններ և գիտություն՝ արդյունավետ ԱՌՆ համար նոր տեխնոլոգիաներ, և այլն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

ՀՀ ԱԻ նախարարի տեղակալ Արա Նազարյանը, Իտալիայի վարչապետ Ջուզեպե Կոնտիի նախագահությամբ և ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակի ղեկավար, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ հանձնակատար Մամի Միզուտորիի հետ համատեղ, մասնակցել է միջոցառման պաշտոնական բացման արարողությանը, որի ընթացքում հանդես է եկել խոսքով՝ ներկայացնելով ս.թ. հունիսի 26-27-ը Երևանում տեղի ունեցած Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի տարածաշրջանային պլատֆորմի արդյունքները և դրա շրջանակներում անդամ երկրների կողմից ընդունված Երևանի հռչակագրի հիմնական դրույթները, վերահաստատելով Հայաստանի պատրաստակամությունը և հանձնառությունը՝ շարունակելու համագործակցել գործընկեր երկրների և կազմակերպությունների հետ և շեշտելով աղետների ռիսկի նվազեցման գլոբալ օրակարգի կարևորությունը:

Ա.Նազարյանը մասնակցել է նաև «Եվրոպայի քաղաքացիների պաշտպանություն. աղետների դիմակայունության սոցիալական պայմանագիր» թեմայով բարձրաստիճան նախարարական կլոր սեղանին, որի ընթացքում քննարկվել են Եվրոպայում աղետների դիմակայունության բարձրացմանն ուղղված գործողությունների քաղաքական դինամիկան և տարածաշրջանային համագործակցության այն կոնկրետ ոլորտները, որոնք կարող են առաջ մղել այդ գործընթացները:

Նոյեմբերի 23-ին Ա.Նազարյանն աշխատանքային հանդիպում է ունեցել Իտալիայի վարչապետի աշխատակազմի Իտալիայի բնակչության պաշտպանության ազգային վարչության պետ Անգելո Բորելիի և գլխավոր տնօրեն Ագուստինո Միոզոյի հետ, որի ընթացքում կողմերը քննարկել են բնակչության պաշտպանության

ոլորտում Հայաստանի և Իտալիայի միջև համագործակցության խորացման հնարավորությունները:

Ֆորումի շրջանակներում Սենդայի գործողությունների ծրագրի մոնիթորինգի գործընթացների, ԱՌՆ ոլորտում կարողությունների զարգացման և ԱՌՆ դաշտում գենդերային հիմնահարցերին նվիրված առանձին նիստերի և աշխատաժողովների ընթացքում ՀՀ ԱԻՆ ներկայացուցիչ Մ.Հակոբյանը հանդես է եկել զեկույցներով՝ ներկայացնելով Հայաստանի փորձը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Նախարարական կլոր սեղանի շուրջ հանդիպման օրակարգում ներառվել է նաև Սենդայի գործողությունների ծրագրի իրականացման նոր հանձնարարականներ և հանձնառություններ բովանդակող «Եվրոպայի քաղաքացիների պաշտպանություն. աղետների դիմակայունության սոցիալական պայմանագիր» նստաշրջանի բարձր մակարդակի կոմյունիկեի ընդունման հարցը, որը հանդիպման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ֆորումի վերջին աշխատանքային օրը՝ փակման նիստի ընթացքում անդամ երկրների մասնակիցների ուշադրությանը և հավանությանն է ներկայացվել նաև ԱՌՆ Հռոմի Հռչակագիրը:

Իտալիայի պաշտոնական ներկայացուցիչների հետ երկկողմ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել, որպես սկզբնական քայլ, վերանայել երկու պետությունների միջև գործող փոխըմբռնման հուշագիրը՝ հստակեցնելով համագործակցության հիմնական ողղությունները, մասնավորապես՝ ԱՌՆ կրթության, սեյսմիկ պաշտպանության, կամավորության զարգացման, նորարարական տեխնոլոգիաների առնչությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակի ղեկավար ներկայացուցիչների հետ ոչ ֆորմալ հանդիպման ընթացքում ՀՀ ԱԻ նախարարի տեղակալ Ա.Նազարյանը շոշափել է ապագայում հերթական ԱՌՆ եվրոպական ֆորումը Հայաստանում անցկացնելու հավանականությունը՝ հաշվի առնելով այս տարի Հայաստանում տեղի ունեցած Կենտրոնական Ասիայի և Հարավային

Կովկասի տարածաշրջանային պլատֆորմի հաջողությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածաշրջանային ձևաչափով ԱՌՆ միջոցառումները տեղի են ունենում յուրաքանչյուր 2 տարին մեկ և հաջորդ Եվրոպական ֆորումի հյուրընկալ երկիրն արդեն որոշված է, ՄԱԿ-ի ներկայացուցիչները խոստացան հարցին անդրադառնալ ավելի ուշ:

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐԱ ՆԱԶԱՐՅԱՆ

27.11.2018թ.